ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

---

## ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին

ՇՄՆՈՒՀ -ՇՀԱՊՁԲ -11/2-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակներում

<<ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել 20014թ –ին ձեռքբերելու սննդամթերք:

Սննդամթերքի ձեռքբերման պայմանները սահմանված են կից ներկայացվող պայմանագրի նախագծում:

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է << ՇՄՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ -11/2-1>>:

Հայտնում ենք, որ սննդամթերքի գնման վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Շիրակի մարզ, գ. Սառնաղբյուր , 1-ին փողոց, 8-րդ նրբ., թիվ 9 շենք Սիլվա Պետրոսյանին

մինչև 2014թ -ը , մայիսի 15-ը ժամը 12-00:

Հայտերը կբացվեն Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքում՝ 1-ին -փողոցի , 8-րդ նրբ., թիվ 9 հասցեում 2014թ -ին, մայիսի 15-ին ժամը12-00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Մասնակցի կողմից անձամբ հայտի ներկայացում պարտադիր չէ:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ

Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական

հաստատության տնօրեն Ա,Շաբոյան

Հավելված N 1

<<        >>                    2014թ.

N ՇՄՄՆՈՒՀ -ՇՀԱՊՁԲ 11/2-1

ծածկագրով                  գնման պայմանագրի

# ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ | | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---|---|---|
| 1 | | 2 | 3 |
| h/h | ԱՊՐԱՆՔՆԵՐ | | |
| 1, | ՀԱՑ | ԿԳ | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀUS 31-99: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 2, | ԿԱՐԱԳ | ԿԳ | Սերուցքային, յուղայնությունը՝7 1,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕUS 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված |
| 3, | ՇԱՔԱՐԱՎԱԶ | ԿԳ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը` 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը` 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը` 0,0003%-ից ոչ ավել, ԳՕUS 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը` «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը` մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակա |
| 4, | ՄԱԿԱՐՈՆ | ԿԳ | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից` A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B |

| | | | |
|---|---|---|---|
| | | | (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 5, | ԲՐԻՆՁ | ԿԳ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-իցմինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 6, | ՈՍՊ | ԿԳ | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 7, | ՀՆԴԿԱՁԱՎԱՐ | ԿԳ | Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝<br><br>14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված "Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 % |
| 8, | ՄՍԻ ՊԱՀԱԾՈ | ՏՈՒՓ | Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով, ԳՕՍՏ 5284-84 կամ համարժեք: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 9, | ՔԱՂՑՐ ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹ | ԿԳ | թարմ, տեղական արտադրության/Շանթ/ |
| 10, | ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆ Ս/ՎԱՖԼԻ/ | ԿԳ | միջուկով և առանց միջուկի չափածրարված և առանց:ԳՕՍՏ 14031-68կամ համարժեք:Անվտանգությունը մակնշումը՝N2-III-4,9-01-2003 Սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտագության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 11, | ԹԵՅ | ՏՈՒՓ | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների, ԳՕՍՏ 1937-9<br>0 կամ ԳՕՍՏ1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 12, | ՏՈՄԱՏԻ ՄԱԾՈՒԿ | ԿԳ | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով,<br>փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3<br>տարողությամբ, ԳՕՍՏ 3343-89: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : |
| 13, | ԱՂ | ԿԳ | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: |

| | | | |
|---|---|---|---|
| 14, | ՁԵՄ | ԿԳ | Ձեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի ՀՍՏ 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 15, | ԿԱՐՏՈՖԻԼ | ԿԳ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլ որ ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 16, | ԲՆԱԿԱՆ ՀՅՈՒԹ | ՀԱՏ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |
| 17, | ՆՐԲԵՐՇԻԿ | ՏՈՒՓ | Երշիկ եփած՝ պատրաստված տավարի և խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ 220365140098000

ՀՎՀՀ 06104232

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

Ա.ՇԱԲՈՅԱՆ

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

---------------------------------

Հավելված N 2

<< >> 2014թ.

N ՇՄՄՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ 11/2-1 ծածկագրով

գնման պայմանագրի

# ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքների անվանումը | | Չափի միավոր | Միավորի գինը | Նախատեսնվում է գնել 2014թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամսյակ | | 2-րդ եռամսյակ | | 3-րդ եռամսյակ | | 4-րդ եռամսյակ | | ընդամենը | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գումարը |
| h/h | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| 1, | ՀԱՑ | կգ | | - | | 300 | | 450 | | 150 | | 900 | |
| 2, | ԿԱՐԱԳ | կգ | | - | | 25 | | 37,5 | | 12,5 | | 75 | |
| 3, | ՇԱՔԱՐԱՎԱԶ | կգ | | - | | 100 | | 150 | | 50 | | 300 | |
| 4, | ՄԱԿԱՐՈՆ | կգ | | - | | 47 | | 70 | | 23 | | 140 | |
| 5, | ԲՐԻՆՁ | կգ | | - | | 23 | | 35 | | 12 | | 70 | |
| 6, | ՈՍՊ | կգ | | - | | 23 | | 35 | | 12 | | 70 | |
| 7, | ՀՆԴԿԱՁԱՎԱՐ | կգ | | - | | 30 | | 45 | | 15 | | 90 | |
| 8, | ՄՍԻ ՊԱՀԱԾՈ | հատ | | - | | 57 | | 87 | | 28 | | 172 | |
| 9, | ՔԱՂՑՐ ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹ | կգ | | - | | 32 | | 52 | | 16 | | 100 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10, | ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆ/ՎԱՖԼԻ/ | կգ | | - | | 32 | | 52 | | 16 | | 100 | |
| 11, | ԹԵՅ | տուփ | | - | | 5 | | 8 | | 2 | | 15 | |
| 12, | ՏՈՄԱՏԻ ՄԱԾՈՒԿ | կգ | | - | | 3 | | 5 | | 2 | | 10 | |
| 13, | ԱՂ | կգ | | - | | 6 | | 11 | | 3 | | 20 | |
| 14, | ՁԵՄ | կգ | | - | | 32 | | 52 | | 16 | | 100 | |
| 15, | ԿԱՐՏՈՖԻԼ | կգ | | - | | 50 | | 75 | | 25 | | 150 | |
| 16, | ԲՆԱԿԱՆ ՀՅՈՒԹ | լիտր | | - | | 68 | | 102 | | 34 | | 204 | |
| 17, | ՆՐԲԵՐՇԻԿ | տուփ | | - | | 32 | | 52 | | 16 | | 100 | |

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ 220365140098000

ՀՎՀՀ 06104232

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

Ա.ՇԱԲՈՅԱՆ

----------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

-------------ստորագրություն

-------------------ստորագրություն

Հավելված 3

<< >> -----------2014թ կնքված
N-----------<< ՇՄՄՆՈՒՀ- ՇՀԱՊՁԲ -11/2-1
Ծածկագրով գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա<br>ենը<br>Տարի |
| | | | ---- | - | - | 20% | 40% | 65% | 85% | 90% | 100 % | 100 % | 100% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Հավելված N 4

--------------- 2014թ. կնքված

N ՇՄՄՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-1 գնման պայմանագրի

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| գտնվելու վայրը _______________ | գտնվելու վայրը _______________ |
| հհ _________________________ | հհ_________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| հվհհ _______________________ | հվհհ_______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«____» «_________________» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ____________________________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և

Կատարողը՝ ի դեմս_________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ____ _____________ 20___թ-ից __ ___________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |

Հավելված N5

<< ՇՄՄՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ -11/2-1>>:ծածկագրով

մրցույթի հանձնաժողովին

## Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **«ՇՄՄՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-1»**_ ծածկագրով պարբերական մրցույթի հրավերը______________________________________ն առաջարկում է մրցույթի մասնակցի անվանումը(անունը) ____________________չափաբաժին(ներ)կատարել հետեւյալ գներով.___

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | | | |
| 13 | | | | |
| 14 | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |

*3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

-------------------------------------------------------------_ -------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)

_«..........................2014թ ( ամսաթիվը, ամիսը

*Հավելված 6*

*«---------------------------» ծածկագրով*

*ընթացակարգի հրավերի*

«---------------------------» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**

**ԴԻՄՈՒՄ**

--------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_______________________________________________ի կողմից N ----------------------- ծածկագրով հայտարարված ընթացակարգի -----------------------------------------------------------------չափաբաժնին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

--------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

--------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

--------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

--------------------------------------------------------------------------------:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

-------------------------------------------------------------------------------------- ----------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_______201_թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ

ԳՆՄԱՆ

N ՇՄՄՆՈՒՀ -ՇՀԱՊՁԲ-11/2-1>>

Գ. ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ << >> < >> 2014թ.

Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատությունը , ի դեմս տնօրեն Ա.Շաբոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<____________________>> -ն, ի դեմս տնօրեն _________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք /այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար :

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի սույն այմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը. ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը / լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է

Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հաստատող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման / կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանք

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _______________ (_______________________________________________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի համր 2 հավելվածում :

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ / պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքնչյուր դեպքում նվազեցվող / կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ 2014թ. դեկտեմբերի 25-ից:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N4/:

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գնաձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Վաճառողին հաղթող ճանաչելու / ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որ չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:: Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանգրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուիր հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 հավելվածները բաղկացած հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքնչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող թոխքնցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հ Հ իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ<br>ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ<br>ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ<br>Հ/Հ 220365140098000<br>ՀՎՀՀ 06104232<br>ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ<br>Ա.ՇԱԲՈՅԱՆ<br>---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | --------------------------------- |